1283

ՐԱԳԱԾ

Հատ Ս. ՄԱՐՇԱԿԻ
փոխ. ԽՆԿՈ ԱՊԵՐ

ՊԵՏՀՐԱՏ 1 9 2 8 ՅԵՐԵՎԱՆ

Լույս է տեսնում ՀՍԽՀ. ԼԺԿ Սոցդասգլխվարչության կից գործող Մանկական գրականության Հանձնաժողովի հավանությամբ 23

Գրաուեպ. № ՐՀ30 Տիրաժ 4000. Վիմագր. Հայպոլիգ. պատ. 2791.

Ս.ՍՈՒՐԵՆՅԱՆ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Տիկնոջ տվին տպագիր
Բագաժի անդորրագիր,
Թե իրերն են հինգ տեսակ—

Աթոռ,
Բազկաթոռ,
Պայուսակ
Պատկեր-գրքեր մի կողով
Ու մի շնիկ՝ վզողով։

Բագաժ ընդունող Հագոն
Լցնել տվեց մի վագոն
Են իրերը հինգ տեսակ

Աթոռ,
Բազկաթոռ,
Պայուսակ,
Պատկեր-գրքեր մի կողով
Ու մի շնիկ՝ վզողով։

Բայց հենց առաջին զանգից
Շնիկը պրուկ վագոնից·



Հասան Սանահին.
Հաշվեցին տեղերը մին, մին՝
Կան իրերը չորս տեսակ—
Աթոռ,
Բազկաթոռ,
Պայուսակ,
Պատկեր-գրքեր մի կողով—·
Շնիկն ուր է վզողով։

Ակների մոտ պպզած,
Մազ ու մուզը գզգզած
Մի մեծ, լղար շուն տեսան—:
Վրա հասան,
Բռնեցին—,
Վագոնից ներս նետեցին
Իրերի մոտ չորս տեսակ—

Աթոռ,
Բազկաթոռ,
Պայուսակ,
Պատկեր-գրքեր մի կողով—.
Բազմոցն ելի հինգ տեղով։

Մայրաքաղաք Յերևան—...
Հասան, իջան կայարան.
Փակ վագոնը շուտ բացին—,
Բերին տիկնոջ հանձնեցին
Իր իրերը հինգ տեսակ—

Աթոռ,
Բազկաթոռ,
Պայուսակ,
Պատկեր-գրքեր մի կողով,
Հետն էլ մի շուն՝ մեծ գլխով—

Շունն է հաչում,
Կլանչում,
Զար տիկինը վռնց ճչում—.
—Ավազակներ...
Հրեշներ...
Բա շնիկս
Ես գեշն եր...
Բա ես ցեղից,
Ես տեսակ...

Դեն շպրտեց պայուսակ,
Վոտով՝—աթոռ,
Բազկաթոռ,
Պատկեր, գրքեր մեծ կողով՝
—Տվեք շնիկս վզովս։

—Հանգստացի՛ր,
Տիկին քաղաքացի՛,
Քիչ ճղավի բարձրաձայն,
Անդորրագրի համաձայն
Ստացի՛.
Ա՛յ իրերդ հինգ տեսակ—

Աթոռ,
Բազկաթոռ,
Պայուսակ,
Պատկեր-գրքեր մի կողով
Ու մի շնիկ՝ վզողով։

Սակայն
Իմացի.
Շունը ճամբին
Կարող էր աճել
Ես քան,
Ես չափին։

Հ 39206
ՀԱՅ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220039206

[054]

X

A3

ԳԻՆՆ Ե50ԿՈՊ

Հ. Ս. Խ. Հ. ՊԵՏՀՐԱՏԻ

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԳՐԱԴԱՐԱՆ

Շունն ու կատուն, ՀՈՎ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ	50 կ.
Մեծն Հոկտեմբեր, ԽՆԿՈ ԱՊԵՐ	30 կ.
Առաջին վոլսը, փոխադր. ԽՆԿՈ ԱՊԵՐ	50 կ.
Մի գավաթ թեյ, փոխ. ԽՆԿՈ ԱՊԵՐ	60 կ.
Ջեյրանի հիվանդությունը, ՍԻՄԱԿԻ	20 կ.
Վարսիկի տիկնիկը փոխ »	20 կ.
Գորտին ազատեց » »	20 կ.
Ցոլակի շապիկը » »	20 կ.
Ինչ լավ ոգնեցին » »	20 կ.
Նանի թանը » »	20 կ.
Մանկակոչ կամ Մանկ. Ինտերնացիոնալ, փոխ. ԽՆԿՈ ԱՊԵՐ	90 կ.
Նույը՝ թուրքերեն, փոխ. ՍՈՂԱԲՅԱՆ	90 կ.
Հսկա բզեղը ու քաջ. ծիտիկը, փոխ. ԽՆԿՈ ԱՊԵՐ	50 կ.
Եղջերուն, ՀՈՎ. ԹՈՒՄԱՆՅԱՆ	35 կ.
Նոր շոգեշարժը, փոխ. ԽՆԿՈ ԱՊԵՐ	30 կ.
Հովիվ Մկոն ու կկուները, փոխ. ԽՆԿՈ ԱՊԵՐ	25 կ.
Քնից առաջ, թարգ. Վ. ՆՈՐԵՆՑ	25 կ.
Մոծակը » » »	25 կ.
Փոքրիկ ներկարարները »	20 կ.
Էլեքտրական հավը, թարգ. Հ. ՍԱՌԻԿՅԱՆՑ	20 կ.
Այծարած Մարկոն, ԼԱՐԻՆԱՅԻ	20 կ.
Խուժան Արշոն, Ս. ՋՈՐՅԱՆԻ	25 կ.
Թորոսի սեղվանոցը, ՏԵՐ ԱՎԱԳՅԱՆԻ	20 կ.
Բագաժ, փոխ. ԽՆԿՈ ԱՊԵՐ	50 կ.